

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԱԵՐ.

ԼՈՒՄԱՅ. — Գրական հանդէս. երկրորդ տարի,
1897. զիւրք Ա.

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ.

Անդրէաս երէց (պատմ. վիպակ), — Մուրացան.
Խաչատուր Աբովեան (կենս.) — Ն. Տէր Կարապետեան.

Մեր Տէրը (պատկեր) — Ս. Աւետիքեան.
Ազգասէր մարդը իւր մահուան վախտը (բանաստ.) — Խ. Աբովեան.

Առ մայրն իւր (բանաստ.) — Նոյն.

Մշոյ աշխարհ (նկարագիր).

Կարօս խաչ (ժողովրդ. բանահիւսութիւն).

Ինքնօգնութիւնը կանանց կողմէն երուս. — Մս.

Բէնքսի, թարգմ. Ա. Սպարապետեան.

Քաղաքակրթութիւն և հին աշխարհներ. — Ա. Լէնին.

գերմ. փոխ. Տիրատուր.

Աշակերտի յուշատետրը. — Խս. Յարութիւնեան.

Հայաստանեայց եկեղեցու կանոնգիրք. — Գ. ք.

Աղանեան.

ՊԱՏՄԱԿԱՆ.

Դանիէլ կաթողիկոսի գրութիւնները. ա) ֆրանսիական դեսպանին և նախարարին. բ) Նապօլէօն Մեծին. գ) Ֆրանց Գ. կայսեր.

Բարձր. խորհրդի գրութիւնները Նապօլէօն Մեծին.

Պարսից տիրապետութեան վերջին տարին. — Գ. ք. Ա.

Ս. Նազարեանի նամակները.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Աստուածաշնչի տպագրութիւնը Ս. Էջմիածնում.

Գաւրդան երէց (Մշու բարբառով).

Քահանայ մը, որ չկշտանար. — Յ. Պարոնեան.

ՅԱՒԵԼՈՒԾ՝.

Լինհարդ և Գերարուդ. — Պետտալօցցու. Գերմ. թարգմ. Ի. Յ.

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ.

ԻԱ. Սասուն և Տիգրիսի աղբերաց սահմանները. Ման Ա. Պատմական տեղեկութիւնք Սասնոյ վրայ. — Ա. Յամաշէկ. թարգմ. Հ. Բ. Պէլէ-չիկճեան. Մխիթ. Ուխտէն. — Վիեննա 1896 (գինն է մի ֆրանկ)

ԻԲ. Արգարու զրոյցը Մովսէս Խորենացւոյ պատմութեան մէջ. քննադատական ուսումնասիրութիւնք. — Ա. Կարրիէր. թարգմ. Հ. Գ. Մէնէվիշեան. Մխիթ. Ուխտէն. — Վիեննա 1897. (գինն է 1 ֆ. 50 ս.)

Ներու գրութիւններն ևս մաս առ մաս լոյս են տեսել. Հանդէս Ամսօրեայ թերթի մէջ. ուրախակի է, որ այժմ առանձին հրատարակուելով՝ մատչելի են դառնում ընթերցողների աւելի ընդարձակ շրջանի համար. — Առաջին գրքոյը ներկայացնում է ամենահետաքրքիր պատմական տեղեկութիւնների մի ժողովածու. նախնական դարերից սկսած մինչև մեր ժամանակին վերաբերեալ, որ հմուտ հեղինակը քաղել է թէ՛ հայկական և թէ՛ օտար մեծ մասամբ հնասիրտ և լեզուագէտ սակաւ թուով զիտնականների միայն մատչելի աղբիւրներից. Ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս, այդ գրութիւնը նորա գործի առաջին մասն է միայն. «Շրջակայից և ի մասնաւորի Տիգրիսի աղբերաց սահմաններուն պատմական տեղագրութեան վերաբերեալ նիւթերն երկրորդ ուսումնասիրութեան մ' առարկայ պէտք է ըլլայ. ասում է նա իւր գրութիւն վերջում և մենք թարգմանչի հետ կցանկանայինք շուտով կատարուած տեսնել այդ խոստումը, որով լրացած կլինէր Հայաստանի ամենանշանաւոր և պակաս ծանօթ գաւառներից մէկի բազմակողմանի նկարագիրը մասնագէտի գրչով.

Ներկորդ գրութիւնը բնագրի մասին խօսք եղել է արդէն Արարատի էջերում (1895 փետրուար. եր. 78). Արգոյ թարգմանչը իւր կողմից մի յառաջարան է աւելացնում. «Մովսէս Խորենացւոյ քննադատութեան նկատմամբ քանի մը խօսք, որով օգնում է հայ սովորական ընթերցողին այդ գրքի Մովսէս Խորենացու ուսումնասիրութեան նկատմամբ ունեցած արժէքն ըմբռնելու. Յանկալի էր, որ որչափ կարելի է շատ հետաքրքրուողներ լինէին այդ ուսումնասիրութեամբ և օգտուողներ այդ գրքից.

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼԱՐԱՅ ՄԷՋ. Աղեգրական և աղագրական ակնարկներ. — Կ. Տիւրեան. Վիեննա. 1896 Մխիթ. տպարան. (գինն է 1 ֆր. = 35 կ.).

ԱԳԻՆԱՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ. Քաղաւոր ի տանէ Դաւթի. — Պրոֆէսոր Ի. Հ. Ինգրա-յամ. թարգմ. ռուսերէնից. Յովսէփ քահ. Տէր Պետրոսեանց. Թիֆլիս. 1897. (գինն է մի րուբլի).

